ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0010 Երևան Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004
Էլ. փոստ info@moj.am

ՈՐՈՇՈՒՄ N 43 -Ա

Կառավարչի որակավորումը դադարեցնելու մասին

01.06.2021թ. **ք. Երևան**

ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Ռուստամ Բադասյանս՝ ուսումնասիրելով Աշոտ Խաչատրյանի՝ սնանկության գործերով կառավարչի որակավորումը դադարեցնելու վերաբերյալ հարուցված վարչական վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

1. Էական նշանակություն ունեցող փաստերը.

1.1. ՀՀ արդարադատության նախարարությանն ուղղված 20.05.2021թ.-ի թիվ Մ/29832-2021 դիմումով (այսուհետ՝ Դիմում) սնանկության գործերով կառավարիչ Աշոտ Խաչատրյանը (այսուհետ նաև՝ Դիմումատու) խնդրել է դադարեցնել իր՝ սնանկության գործերով կառավարչի որակավորումը:

1.2. Դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 թվականի մայիսի 31-ին նշանակվել են լսումներ, որի մասին Դիմումատուն պատշաճ ծանուցվել է:

1.3. Կառավարիչը 31.05.2021թ.-ին նշանակված ժամին իր ներկայացուցչի՝ փաստաբան Կարեն Ղոնյանի հետ ներկայացել է ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողական ծառայություն:

1.4. Լսումների ընթացքում Կառավարիչը և վերջինիս ներկայացուցիչը հայտնել են, որ Դիմումի վերաբերյալ լրացուցիչ բացատրություններ, միջնորդություններ և առարկություններ չունեն, պնդում են դիմումով ներկայացված խնդրանքը, այն է՝ դադարեցնել Աշոտ Խաչատրյանի՝ սնանկության գործերով կառավարչի որակավորումը:

1.5. Վարչական վարույթի լսումների վերաբերյալ 31.05.2021թ. կազմվել է թիվ 1 արձանագրությունը՝ երկու օրինակից, որի մեկ օրինակը առձեռն հանձնվել է Կառավարչին:

2. *<u>Կիրառելի իրավական նորմերը.</u>*

«Սնանկության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը դադարեցնում է կառավարչի որակավորումը, եթե՝ կառավարիչը դիմել է այդ մասին:*

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *կառավարչի որակավորումը դադարեցվում է՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 5-16-րդ կետերով նախատեսված դեպքերում որակավորումը դադարեցնելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից*:

3. <u>Իրավական վերլուծությունները և եզրահանգումը.</u>

Վերոշարադրյալ իրավանորմերի մեկնաբանումից պարզ է դառնում, որ, ի թիվս այլ հիմքերի, կառավարչի որակավորումը դադարեցվում է նաև այդ մասին վերջինիս կողմից դիմում ներկայացնելու հիմքով:

Կառավարչի կողմից ներկայացված դիմումի հիման վրա վերջինիս որակավորումը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի որոշմամբ, որի ուժի մեջ մտնելու օրվանից որակավորումը համարվում է դադարեցված:

Տվյալ պարագայում Դիմումատուն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ներկայացված դիմումով խնդրել է դադարեցնել իր՝ սնանկության գործերով կառավարչի որակավորումը, ինչպես նաև դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի շրջանակներում նշանակված լսումներին ներկայանալով՝ հայտնել է, որ դիմումի վերաբերյալ լրացուցիչ բացատրություններ, միջնորդություններ և առարկություններ չունի, պնդում է դիմումով ներկայացված խնդրանքը, այն է՝ դադարեցնել Աշոտ Խաչատրյանի՝ սնանկության գործերով կառավարչի որակավորումը:

Նշվածի արդյունքում գտնում եմ, որ առկա է «Սնանկության մասին» օրենքի 29.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը՝ սնանկության գործով կառավարիչ Աշոտ Խաչատրյանի որակավորումը դադարեցնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սնանկության մասին» օրենքի 29.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Սնանկության գործերով կառավարիչ Աշոտ Խաչատրյանի (որակավորման վկայականի համարը՝ 20121102-00035, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը՝ 290.08518, գործունեության վայրի հասցեն՝ Ք. Երևան, Նոր-Արեշ, 41 փ., 43 տ., ծանուցման հասցեն՝ Ք. Երևան, Նոր-Արեշ, 41 փ., 43 տ.) որակավորումը դադարեցնել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սնանկության գործերով կառավարիչ Աշոտ Խաչատրյանին այն հանձնելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

X _____

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ